## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 75-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 14 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի ավագանու 2024թվականի հինգերրորդ նստաշրջանի դեկտեմբերի 25 -ի թիվ 14 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023թվականի դեկտեմբերի 22-ի N 82-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2025 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի կառուցվածքը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի «Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2025թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

8. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և համայնքի սեփականութուն ճանաչված գույքը օտարելու մասին

9.Հողամասերի նպատակային նշանակությունը փոփելու և հասցեավորման օբյեկտների անվանման մասին
10.Հողամասերը Ակունք համայնքի սեփականություն ճանաչելու մասին
11.Համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 76-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 83-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու
"25 դեկտեմբերի"___ 2024 թվականի N 76- Ն
որոշմամբ

*Ակունք համայնքի 2024թվականի բյուջեի եկամուտների հավաքագրման եռամսյակային*
*համամասնությունները ըստ առանձին եկամտատեսակների*

| | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | հոդվ.N | եռամսյ. | կիսամյ. | 9 ամիս | տարի |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | **121486.1** | **237520.7** | **361655.3** | **510758.1** |
| | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում`** | | **25400.0** | **44500.0** | **70700.0** | **107818.0** |
| 1 | **Գույքային հարկեր,անշարժ գույքից,այդ թվ.** | 7131 | **5500.0** | **11000.0** | **21000.0** | **38500.0** |
| | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 5500.0 | 11000.0 | 21000.0 | 38500.0 |
| | **Գույքային հարկեր,այլ գույքից,այդ թվում`** | 7136 | **19000.0** | **32000.0** | **46500.0** | **57000.0** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 19000.0 | 32000.0 | 46500.0 | 57000.0 |
| | **ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ,այդ թվում`** | 7145 | **900.0** | **1500.0** | **3200.0** | **12318.0** |
| | Հիմնական շինության համար( մինչև 300քմ) | | 360.0 | 600.0 | 1980.0 | 11000.0 |
| | Ծխախոտի եվ ոգ.խմված.հիմն.շին.ներսում | | 350.0 | 630.0 | 850.0 | 900.0 |
| | Հանրային սննդի իրացման թույլտվության համար | | 70.0 | 100.0 | 160.0 | 200.0 |
| | Արտաքին գովազդի թույլտվության համար | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Հեղուկ վառելիքի թույլտվության համար | | 120.0 | 170.0 | 210.0 | 218.0 |
| 2 | **Ընթացիկ ներքին պաշտոն. դրամաշնորհ** | 7331 | **78034.6** | **156069.2** | **234103.8** | **312138.6** |
| | Պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա | | 78034.6 | 156069.2 | 234103.8 | 312138.6 |
| | Պետական բյուջեից համայնքի կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ | 7332 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3 | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում** | 7400 | **18051.5** | **36951.5** | **56851.5** | **90801.5** |
| | **Գույքի վարձակալությունից եկամուտ** | 7415 | **2250.0** | **3800.0** | **6800.0** | **10000.0** |
| | 4.1Համայնքի սեփ. համարվող հող վարձ. վճար | | **2200.0** | **3700.0** | **6600.0** | **9500.0** |
| | այդ թվում գյուղ.նշ.հողերից | | 1700.0 | 2400.0 | 4600.0 | 6500.0 |
| | Ոչ գյուղ.նշ.հողերից | | 500.0 | 1300.0 | 2000.0 | 3000.0 |
| | Այլ գույքի վարձակալությունից եկամուտ | | 50.0 | 100.0 | 200.0 | 500.0 |
| | **Եկամուտներ ծառայությունների մատուցումից** | 7421 | **400.0** | **600.0** | **800.0** | **1500.0** |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ | | 400.0 | 600.0 | 800.0 | 1500.0 |
| | **Վարչական գանձումներ,այդ թվում** | 7422 | **10600.0** | **26750.0** | **42500.0** | **71500.0** |
| | Տեղական վճարներ | | 4600.0 | 11250.0 | 19500.0 | 37500.0 |
| | Մրցույթների և աճուրդների մասնակցության վճար | | 0.0 | 0.0 | 0.0 | 1500.0 |
| | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | 1500.0 | 4000.0 | 6500.0 | 9000.0 |
| | Ծնողական վճար մանկ.ծառ.օգտ.համար | | 1100.0 | 3250.0 | 6000.0 | 13000.0 |
| | Այլ տեղական վճար /ջրի վճար/ | | 2000.0 | 4000.0 | 7000.0 | 14000.0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 6000.0 | 15500.0 | 23000.0 | 34000.0 |
| | **Մուտքեր տուգանքներից,տուժանքներից** | 7431 | **750.0** | **1500.0** | **2250.0** | **3000.0** |
| | Վարչ. իրավախախտ. համար գանձվող վճար | | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |
| | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | 7442 | **3801.5** | **3801.5** | **3801.5** | **3801.5** |
| | Կապիտալ ծախսերի ֆին.համար բյուջե ստ.մուտքեր | | 3801.5 | 3801.5 | 3801.5 | 3801.5 |
| | **Այլ եկամուտներ** | 7451 | **250.0** | **500.0** | **700.0** | **1000.0** |
| | Օրենքով և իրավական այլ սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 250.0 | 500.0 | 700.0 | 1000.0 |
| 4 | **Տարեսկզբի ազատ մնացորդ ( վարչական )** | | **3134.8** | **3134.8** | **3134.8** | **3134.8** |
| | **Տարեսկզբի ազատ մնացորդ ( ֆոնդային )** | | **40473.3** | **40473.3** | **40473.3** | **40473.3** |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | **165094.2** | **281128.8** | **405263.4** | **554366.2** |

*Ակունք համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերը ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման*

| Բա-ժին | Խու-մբ | Դաս | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | եռամսյ. | կիսամյ. | 9 ամիս | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 165094.2 | 281128.8 | 405263.4 | 554366.2 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ | 132650.0 | 198219.2 | 280067.2 | 388070.0 |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետակ.կառ | 88550 | 130569.2 | 183617.2 | 261570 |
| 01 | 3 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1400.0 | 1600.0 | 1800.0 | 1900.0 |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 1400 | 1600 | 1800 | 1900 |
| **01** | **5** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 |
| 01 | 5 | 1 | Ընդh.բնույթի հանր.ծառ.գծով.նախ.աշխ | 3500 | 3500 | 3500 | 3500 |
| 01 | 6 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 39200.0 | 62550.0 | 91150.0 | 121100.0 |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 39200 | 62550 | 91150 | 121100 |
| **02** | **0** | **0** | **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ,այդ թվում** | 100.0 | 150.0 | 200.0 | 300.0 |
| 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 100 | 150 | 200 | 300 |
| **3** | **0** | **0** | **ՀԱՍ.ԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** | 600.0 | 1000.0 | 1900.0 | 2200.0 |
| 03 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 600 | 1000 | 1900 | 2200 |
| 04 | 2 | 0 | **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** | 1700.0 | 3700.0 | 6900.0 | 9100.0 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 1500 | 3300 | 6300 | 8300 |
| 04 | 2 | 4 | Ոռոգում | 200 | 400 | 600 | 800 |
| 04 | 5 | 0 | **ՏՐԱՆՍՊՈՐՏ, որից** | 143142.7 | 144708.1 | 151408.1 | 152108.1 |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 143142.7 | 144708.1 | 151408.1 | 152108.1 |
| 04 | 9 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,այդ թվ | -300000.0 | -400000.0 | -400000.0 | -400000.0 |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություն.,այլ դասին չպատ | -300000 | -400000 | -400000 | -400000 |
| 05 | 0 | 0 | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,ա** | 20650.0 | 29410.0 | 43460.0 | 50500.0 |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 20500 | 29160 | 43110 | 50000 |
| 05 | 3 | 1 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ԴԵՄ ՊԱՅ | 150 | 250 | 350 | 500 |
| **06** | **3** | **0** | **ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | 85050.0 | 196250.0 | 198750.0 | 201200.0 |
| 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | 85050 | 196250 | 198750 | 201200 |
| **06** | **4** | **0** | **Փողոցային լուսավորում** | 8200.0 | 17800.0 | 23000.0 | 26600.0 |
| 06 | 4 | 1 | Փողոցային լուսավորում | 8200 | 17800 | 23000 | 26600 |
| **08** | **0** | **0** | **ՀԱՆԳԻՍՏ,ՄՇԱԿՈՒՅԹ,ԿՐՈՆ, այդ թվում** | 9600.0 | 11700.0 | 18500.0 | 22200.0 |
| 08 | 2 | 3 | Մշակութային | 4000 | 4400 | 6600 | 6900 |
| 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 1000 | 1500 | 2000 | 2000 |
| 08 | 2 | 7 | Հուշարձանների և մշ.արժեք.պահպ. | 2300 | 2300 | 3300 | 3500 |
| 08 | 3 | 3 | Տեղեկատվության ծեռքբերում | 500 | 700 | 1400 | 1500 |
| 08 | 4 | 1 | Երիտասարդական ծրագրեր | 1000 | 2000 | 3700 | 4300 |
| 08 | 4 | 2 | Նվիրատվություն շահ.չհետ.կազմ. | 800 | 800 | 1500 | 4000 |
| **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ,այդ թվում** | 60601.5 | 74391.5 | 76791.5 | 95501.5 |
| 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 59101.5 | 71891.5 | 72691.5 | 91001.5 |
| 09 | 2 | 2 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 1000 | 2000 | 3600 | 4000 |
| 09 | 4 | 1 | Բարձր.մասն.կրթություն | 500 | 500 | 500 | 500 |
| 10 | 0 | 0 | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,այդ թվում** | 2800.0 | 3800.0 | 4286.6 | 6586.6 |
| 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություն | 2800 | 3800 | 4286.6 | 6586.6 |
| 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 11 | 1 | 2 | Համայնքի պահուստային ֆոնդ | 0 | 0 | 0 | 0 |

*Ակունք համայնքի 2024թվականի բյուջեի ծախսերը `ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման*

*Ակունք համայնքի 2024թվականի բյուջեի ծախսերը `ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման*

| | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | հոդվ.N | եռամսյ. | կիսամյ. | 9 ամիս | տարի |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **165094.2** | **281128.8** | **405263.4** | **554366.2** |
| 1 | **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ,այդ թվում`** | | **64310.0** | **118629.2** | **180167.2** | **275500.0** |
| | Աշխատողների աշխատավարձեր,հավելավճարներ | 4111 | 60310 | 110229.2 | 167567.2 | 239500 |
| | Պարգևատրումներ,դրամական խրախուսումներ | 4112 | 4000 | 8400 | 12600 | 36000 |
| 2 | **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, այդ թվում`** | | **78240.0** | **120090.0** | **180086.6** | **231456.6** |
| | բանկ.ծառայություն | 4211 | 300 | 600 | 800 | 1000 |
| | էներգետիկ ծառայություններ | 4212 | 6800 | 11100 | 17100 | 20500 |
| | կոմունալ | 4213 | 8400 | 8600 | 16100 | 21300 |
| | Կապի ծառայություններ | 4214 | 1500 | 1500 | 1700 | 2500 |
| | ապահով.ծառ. | 4215 | 164 | 400 | 700 | 1000 |
| | գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 550 | 950 | 1350 | 1500 |
| | Համակարգչային ծառայություններ | 4232 | 1200 | 1400 | 1600 | 1700 |
| | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 500 | 700 | 1400 | 1500 |
| | Կառավարչական ծառայություններ | 4235 | 250 | 500 | 750 | 990 |
| | Ներկայացուցչական ծախս | 4237 | 300 | 700 | 1250 | 1490 |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 3700 | 5150 | 13950 | 15500 |
| | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 8000 | 9100 | 16150 | 16900 |
| | Շենք շինությունների ընթացիկ նորոգում | 4251 | 3040 | 3390 | 9090 | 11200 |
| | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 4252 | 650 | 1500 | 2260 | 3000 |
| | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 300 | 500 | 700 | 990 |
| | Գյուղ.բույսեր | 4262 | 0 | 100 | 800 | 1000 |
| | Տրանսպորտային նյութեր | 4264 | 11354.4 | 21210 | 28210 | 35000 |
| | Կենցաղային նյութեր | 4267 | 150 | 350 | 550 | 900 |
| | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 5803.6 | 9500 | 18900 | 22500 |
| | Սուբսիդիաներ ոչ ֆին.կազմ. | 4511 | 18700 | 30990 | 30990 | 48700 |
| | Դրամաշնորհ | 4637 | 1000 | 1400 | 2700 | 2900 |
| | Կապիտալ դրամաշնորհ | 4655 | 0 | 600 | 900 | 1100 |
| | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 3300 | 4300 | 4786.6 | 7086.6 |
| | Նվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմակերպ. | 4819 | 800 | 800 | 1500 | 4000 |
| | Պարտադիր վճարներ | 4823 | 1478 | 4750 | 5850 | 7200 |
| 3 | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ , այդ թվում`** | | **322544.2** | **442409.6** | **445009.6** | **447409.6** |
| | Շենք շինությունների կառուցում | 5112 | 51750 | 141760 | 143060 | 144260 |
| | Շենք շինությունների կապ.նորոգում | 5113 | 160642.7 | 161458.1 | 161758.1 | 161958.1 |
| | Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 22500 | 22500 | 22500 | 22500 |
| | Վարչական սարքավորումներ | 5122 | 55851.5 | 79841.5 | 79841.5 | 79841.5 |
| | Ոչ նյութական ակտիվ | 5132 | 200 | 200 | 200 | 200 |
| | Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 5133 | 0 | 0 | 0 | 0 |
| | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 30800 | 34850 | 34850 | 34850 |
| 4 | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ,այդ թվում`** | | **-300000.0** | **-400000.0** | **-400000.0** | **-400000.0** |
| | Հողի իրացումից մուտքեր | 8411 | -300000 | -400000 | -400000 | -400000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 77-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին»օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ, 14-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի18-րդ հոդվածի1-ին մասի 18-րդ կետի,«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025թվականի տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի:
3.Սույն որոշման հավելված 1-ի.
1) 1-ին կետի 2)- րդ ենթակետի «բ»-ից «դ» պարբերություններով , 5-րդ կետի 5.1-ին և 5.2-րդ կետերով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափի նկատմամբ կիրառել 0,5 գործակից:
2) 6-րդ, 7-րդ կետերով, 9-րդ կետի 1)-ին ենթակետի «ա»-ից «զ» պարբերություններով 2-րդ ենթակետի «ա»-ից «զ» պարբերություններով, 10-րդ կետի, 12-րդ կետի 1)-ին ենթակետի «ա»-ից «զ» պարբերություններով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափի նկատմամբ կիրառել 0,3 գործակից:
3)շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն որոշման հավելված 1-ի 1.1-ին կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել 0.5 գործակից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 25 -ի N 77 -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական շենքերի և շինությունների) համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

բ. մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

2)սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով չնախատեսված և Կառավարության սահմանված ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 (երեսուն հազար) դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 (հարյուր հազար) դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1 000 000 (մեկ միլիոն) դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1 000 000 (մեկ միլիոն) դրամի հանրագումարի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը

համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

Սույն ենթակետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ Ակունք համայնքի վարչական տարածքում շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

| Գոտի | Գոտիականության գործակից |
|---|---|
| 9-12 | 3.0 |
| 13-16 | 2.0 |
| 17-20 | 1.0 |

3)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 (հինգ հազար) դրամի և սույն կետի 2)-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիանականության գործակցի արտադրյալը,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տասը հազար) դրամի և սույն կետի 2)-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիանականության գործակցի արտադրյալը.

1⍰1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ կառուցվող անհատական բնակելի տների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 1) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա.200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 60 000 (վաթսուն հազար) դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ.501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 000 (չորս հարյուր հազար) դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2 000 000 (երկու միլիոն) դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 2 000 000 (երկու միլիոն) դրամի

հանրագումարի սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրք սահմանել 3 000 (երեք հազար) դրամ,

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն հավելվածի երկրորդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

4.Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում տեղական տուրք սահմանել՝

1) հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

2) սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

3) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված Ակունք համայնքի բարձրլեռնային՝ Հատիս,Զովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ.

5.1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բարձրլեռնային՝ Հատիս,Ձովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝100 000 /հարյուր հազար/ դրամ

5.2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բարձրլեռնային Հատիս,Ձովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ

6.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 (վաթսուն հազար) դրամ.

7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20 000 /քսան հազար/ դրամ.

8.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ.

9.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8 500 (ութ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 500 (տասը հազար հինգ հարյուր) դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 500 (քսան հազար հինգ հարյուր) դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 500 (քսանհինգ հազար հինգ հարյուր) դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ,

2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8 500 (ութ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 500 (տաս հազար հինգ հարյուր) դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 500 (քսան հազար հինգ հարյուր) դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 500 (քսանհինգ հազար հինգ հարյուր) դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ,

10.Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 5000 (հինգ հազար) դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ,

4) խաղատների համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ,

5) շահումով խաղերի համար՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

6) վիճակախաղերի համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ.

12.Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 (ինը հազար) դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 (տասնյոթ հազար) դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000 (քսաներկու հազար) դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 33500 (երեսուներեք հազար հինգ հարյուր) դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 (մեկ հազար) դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8500 (ութ հազար հինգ հարյուր) դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 500 (տասնհինգ հազար հինգ հարյուր) դրամ.

13. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում

տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 (երկու հազար) դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

3)սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ,

4)այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

5)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) դրամ ,

6)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ .

14.Համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 (հարյուր հազար) դրամ.

15.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ.

16.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ.

17.Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 (հինգ միլիոն) դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 (յոթ միլիոն) դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 (տասը միլիոն) դրամ:

18.Համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ 19 000 (տասնինը հազար) դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

19. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ քանմեկ հազար

